

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2025

ՀՈՒՆՎԱՐ - ՓԵՏՐՎԱՐ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 4

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1 Աշխարհագրական մտածողության հիմնական հատկանիշներից չէ.


- 1) ռիթմիկությունը
- 2) համալիրությունը
- 3) կոնկրետությունը
- 4) տարածականությունը

2 Հյուսիսային կիսագնդում կեսօրին լեռների ո՞ր լանջերն են ավելի շուտ ազատվում ձյունից.

- 1) հարավարևելյան
- 2) հյուսիսային
- 3) հյուսիսարևելյան
- 4) հարավային

3 Նկար 1.- ում տրված քարտեզը կազմելու համար ի՞նչ պրոյեկցիա է կիրառվել:

- 1) հասարակածային
- 2) գլանային
- 3) ազիմուտային
- 4) կոնային



նկար 1.

4 Բնութագրումով որոշել վարկածը.

Ելակետ ընդունելով այդ վարկածը՝ գիտնականները եզրակացրել են, որ Երկրի վրա կուտակված հսկայածավալ ջուրն արտահոսել է ընդերքից, Երկրի տաքացումը սկսվել է կենտրոնից: Ո՞րն է այդ վարկածը:

- 1) պատահարային (աղետային)
- 2) երկնաքարային
- 3) խորքային գրավիտացիոն
- 4) միգամածային

5 Արեգակը հյուսիսային արևադարձի վրա լինում է.

- 1) ամառային արևակայության օրը
- 2) աշնանային գիշերահավասարի օրը
- 3) ձմեռային արևակայության օրը
- 4) գարնանային գիշերահավասարի օրը

6

Երկրի մակերևույթից դեպի խորքը ջերմությունն աստիճանաբար.

- 1) բարձրանում է
- 2) մնում է անփոփոխ
- 3) բարձրանում է, այնուհետև՝ իջնում
- 4) նվազում է

7

Ո՞ր պլատֆորմն է առաջացել Լավրասիայի տրոհումից:

- 1) Հնդկական
- 2) Հյուսիսամերիկյան
- 3) Արաբական
- 4) Հարավամերիկյան

8


Երկրային մյուս ոլորտների հետ համեմատած՝ մթնոլորտը

- 1) ամենաձանրն է
- 2) ամենակարծրն է
- 3) ամենախիտն է
- 4) ամենաթեթևն է

9

Նկար 2-ում պատկերված է.

- 1) ցերեկային բրիզ
- 2) գիշերային բրիզ
- 3) ձմեռային մուսսոն
- 4) ամառային մուսսոն



10

Ո՞ր պնդումն է ճիշտ.

Արևադարձային լայնություններում մայրցամաքների արևմտյան ափերի երկայնքով անցնող սառը ծովային հոսանքները.

- 1) նպաստում են տեղումների առաջացմանը
- 2) նպաստում են օդի ջերմաստիճանի բարձրացմանը
- 3) չեն ազդում մերձափնյա տարածքի կլիմայի վրա
- 4) խոչընդոտում են տեղումների առաջացմանը

11

Գետի ակունքի բացարձակ բարձրությունը 2200 մ է, իսկ գետաբերանինը՝ 1000 մ: Գետի անկումը կլինի.

- 1) 2200 մ
- 2) 1200 մ
- 3) 2000 մ
- 4) 1000 մ

12

Ո՞ր բնական զոնայում են տարածվում բառբարն ու շշածառը:

- 1) փշատերև անտառների
- 2) լանատերև անտառների
- 3) հասարակածային մշտադալար անտառների
- 4) սավաննանների

13

Ո՞ր բնական զոնայում են ապրում փիղն ու ընձուղտը:

- 1) տափաստանների
- 2) անապատների
- 3) լայնատերև անտառների
- 4) սավաննանների

14

Ո՞ր կլիմայական գոտին է բաժանվում երեք մարզի՝ միջերկրածովային, ցամաքային, մուսսոնային:

- 1) մերձհասարակածային
- 2) մերձարևադարձային
- 3) մերձարկտիկական
- 4) մերձանտարկտիկական

15

Որո՞նք են միջին հասակի կամ հին լեռնաշղթաներ.

- 1) Դրակոնյանը և Կապին
- 2) Մեծ Կովկասը և Հինդուկուշը
- 3) Պիրենեյները և Կարպատները
- 4) Անդերը և Ալպերը

16

5000 մ-ից բարձր լեռնագագաթներ են.

- 1) Մոնբլանը և Կամերունը
- 2) Օրիսարան և Դեմավենդը
- 3) Ֆուձիյաման և Վեգուվը
- 4) Կլոչևսկայա Սոպկան և Էլբրուսը

17

Վինսոն լեռնագագաթը հվ. լ. 78°-ի վրա է: Որքա՞ն է Վինսոնի ստորոտից հարավային բևեռ իրական հեռավորությունը:

- 1) 1332 կմ
- 2) 8658 կմ
- 3) 1200 կմ
- 4) 780 կմ

18

Ընտրել Հարավային Ամերիկայի բնական զոնաների տեղական անվանումների և բնական զոնայի կամ այն ընդգրկող տարածքի համապատասխանությունների ճիշտ շարքը.

ա. պարամոս	1. խոնավ հասարակածային անտառները
բ. պամպա	2. բարձրալեռնային մարգագետինները Անդերում
գ. սելվաս	3. սավաննաները՝ Բրազիլական սարահարթում
դ. կամպոս	4. մերձարևադարձային տափաստանները Լա-Պլատայի դաշտավայրի հարավում

- 1) ա-2, բ-4, գ-1, դ-3
- 2) ա-3, բ-4, գ-1, դ-2
- 3) ա-3, բ-1, գ-4, դ-2
- 4) ա-2, բ-1, գ-4, դ-3

19

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Պանամայի պարանոցը հարավային կիսագնդում է:
- 2) Պանամայի նավարկելի ջրանցքով միանում են Խաղաղ և Ատլանտյան օվկիանոսները:
- 3) Դրեյկի նեղուցով Հրո երկիր կղզին բաժանվում է Անտարկտիդայից:
- 4) Մագելանի նեղուցով Հրո երկիր կղզին բաժանվում է մայրցամաքից:

20

Ատլանտյան օվկիանոս թափվող գետ է.

- 1) Միսիսիպին
- 2) Կոլորադոն
- 3) Կոլումբիան
- 4) Մակենզին

21

Ո՞ր շարքում սխալ կա.

- 1) Նամիբ, Կալահարի, Սահարա—անապատներ
- 2) Տանգանիկա, Նյասա, Շարի—լճեր
- 3) Զամբեզի, Նեղոս, Օրանժ—գետեր
- 4) Դրակոնյան, Կապի, Ատլասի—լեռներ

22

Աֆրիկայի մերձարևադարձային մշտականաչ անտառների ու թփուտների բնական զոնայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Մթնոլորտային տեղումներն առավելապես թափվում են ձմռանը:
- 2) Հողային ծածկում գերակշռում են շագանակագույն և մոխրագորշ հողերը:
- 3) Տարածված բուսատեսակներն են բաոբաբը, ֆիկուսը, կաուչուկատու հևեան:
- 4) Տարածված կենդանատեսակներն են էմու ջայլամը, դինգո շունը և բադակտուցը:

23

Ո՞ր թերակղզիներն են մխրճվում Մեքսիկական ծոց.

- 1) Յուկատան և Լաբրադոր
- 2) Ֆլորիդա և Յուկատան
- 3) Յուկատան և Կալիֆոռնիա
- 4) Ֆլորիդա և Կալիֆոռնիա

24

«Լեռնային համակարգ — լեռնագագաթ» զույգերից ընտրել ճիշտը.

- 1) Մեծ Կովկաս—Մեծ Արարատ
- 2) Ապալաչներ—Կոսցյուշկո
- 3) Էլբուրս—Դեմավենդ
- 4) Անտարկտիկական Անդեր—Ակոնկագուա

25

Ո՞ր շարքի բոլոր ծովածոցերն են համարվում նույն օվկիանոսի մաս.

- 1) Օմանի, Բիսկայան, Բոտնիկական
- 2) Սիամի, Պարսից, Ադենի
- 3) Ադենի, Պարսից, Բենգալական
- 4) Բենգալյան, Օմանի, Սիամի

26

ԽՍՀՄ-ի կազմում չի եղել.

- 1) Սոլդովան
- 2) Ռումինիան
- 3) Լիտվան
- 4) Էստոնիան

27

Ո՞ր շարքի բոլոր երկրներն անմիջական ելք չունեն դեպի ծով.

- 1) Հունաստան, Վրաստան, Պարագվայ, Նիգեր
- 2) Դանիա, Չեխիա, Աֆղանստան, Բուլղարիա
- 3) Ադրբեջան, Լեհաստան, Տինլանդիա, Լիտվա
- 4) Բոլիվիա, Նեպալ, Շվեյցարիա, Նիգեր

28

Ո՞րտական կառավարման ձևը, երբ պետական իշխանության մարմիններին ընտրում է ժողովուրդը, կոչվում է.

- 1) հերցոգություն
- 2) թագավորություն
- 3) հանրապետություն
- 4) կայսրություն

29

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Քաղաքակրթության հնագույն օջախներն ավելի խիտ են բնակեցված:
- 2) Որոշ տարածքներում բնակչության մեծ խտությունը կարող է պայմանավորված լինել բնակչության բարձր բնական աճով և ներգաղթով:
- 3) Լեոնային շրջաններն աչքի են ընկնում բնակչության խտության բարձր ցուցանիշով:
- 4) Լեոնահանքային արդյունաբերության և էքստենսիվ գյուղատնտեսության ստարածման շրջաններում բնակչության խտությունը փոքր է:

30

Բնակչության կտրուկ աճը համեմատաբար կարճ ժամանակահատվածում անվանում են.

- 1) ժողովրդագրական քաղաքականություն
- 2) ժողովրդագրական ճգնաժամ
- 3) ժողովրդագրական հեղափոխություն
- 4) ժողովրդագրական պայթյուն

31

Երկրի բնակչության թիվը կազմում է 365600 է, ծնելիության գործակիցը՝ 5‰: Ծնվածների բացարձակ թիվը կկազմի.

- 1) 1628 մարդ
- 2) 1980 մարդ
- 3) 2028 մարդ
- 4) 1828 մարդ

32

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Համաշխարհային տնտեսությունը ունի զարգացման երեք փուլ՝ գյուղատնտեսական, արդյունաբերական և հետարդյունաբերական:
- 2) Ճապոնիայում, Շվեյցարիայում և Իտալիայում շատ բարձր է արդյունահանող արդյունաբերության բաժինը:
- 3) Մեր օրերում մեծանում է էներգիայի ոչ ավանդական աղբյուրների օգտագործումը:
- 4) Երկրաջերմային էլեկտրակայանները կառուցում են հրաբխային շրջաններում:

33

Մերենաշինության տեղաբաշխման սկզբունք չէ:

- 1) տեղաբաշխումը սպառման վայրերի մոտ
- 2) տեղաբաշխումը խիտ բնակեցված վայրերում
- 3) տեղաբաշխումը գիտական կենտրոնների մոտ
- 4) տեղաբաշխումը վառելիքային բազաների մոտ


34

Ընտրել «մշակութային հուշարձան — պետություն» համապատասխանությունների ճիշտ շարքը.

- | | |
|-----------------|-----------------|
| 1. Մթոունհենջ | ա. Պերու |
| 2. Թաջ Մահալ | բ. Հունաստան |
| 3. Ակրոպոլիս | գ. Մեծ Բրիտանիա |
| 4. Մաչու Պիկչու | դ. Հնդկաստան |

- 1) 1-բ, 2-գ, 3-ա, 4-դ
- 2) 1-գ, 2-դ, 3-բ, 4-ա
- 3) 1-բ, 2-դ, 3-գ, 4-ա
- 4) 1-գ, 2-ա, 3-բ, 4-դ

քարտեզ 1



35

Քարտեզ 1-ում ո՞ր ծովն է նշված Ա տառով.

- 1) Դեղին
- 2) Արևելաչինական
- 3) Սուլավեսի
- 4) Հարավչինական

36

Քարտեզ 1-ում n° ր պետությունն է նշված Q տառով.

- 1) Ուզբեկստան
- 2) Թուրքմենստան
- 3) Տաջիկստան
- 4) Ղազախստան

37

Ավստրալիայի վերաբերյալ n° ր պնդումն է ճիշտ.

- 1) Աշխարհի ամենախիտ բնակեցված պետություններից է:
- 2) Արդյունաբերության առաջատար ճյուղը թեթև արդյունաբերությունն է:
- 3) Բնակչության թվով ամենախոշոր քաղաքը Կանբերան է:
- 4) Ստորերկրյա արտեզյան ջրերի պաշարներով աշխարհի առավել հարուստ երկրներից է:

38

Ամերիկայի Միացյալ Նահանգներին են պատկանում.

- 1) Ֆոլկլենդյան կղզիները
- 2) Սեյշելյան կղզիները
- 3) Հավայան կղզիները
- 4) Կանարյան կղզիները

39

Լատինական Ամերիկայի վերաբերյալ n° ր պնդումն է սխալ.

- 1) Նավթի արդյունահանման ծավալով առաջատար երկիր է Չիլին:
- 2) Պարանա գետի վրա է կառուցված Բոտայպու խոշորագույն ջրէկը:
- 3) Շաքարեղեգի մշակության ծավալով Բրազիլիան աշխարհում առաջինն է:
- 4) Խոշորագույն նավահանգիստներից են Բուենոս Այրեսն ու Ռիո դե ժանեյրոն:

40

Ռուսաստանի Դաշնության վերաբերյալ n° ր պնդումն է ճիշտ.

- 1) Բնական գազի պաշարներով աշխարհում գրավում է առաջին տեղը:
- 2) Էլեկտրաէներգիայի մեծ մասն արտադրվում է ատոմային էլեկտրակայաններում:
- 3) Նավթի հիմնական պաշարները տեղաբաշխված են Կուզբասի, Կանսկ-Աչինսկի ավազաններում:
- 4) Ոսկու արդյունաբերությունը հիմնականում կենտրոնացած է Կուլա թերակղզում:

41


Արաքս գետի անկումը 2615 մ է: Թեքությունը կլինի.

- 1) 3,87 մ/կմ
- 2) 2,44 մ/կմ
- 3) 1,9 մ/կմ
- 4) 7,6 մ/կմ

42

Ո՞ր լեռնագագաթն է ՀՀ-ում.

- 1) Գոմշասար
- 2) Մեծ Քիրս
- 3) Աժդահակ
- 4) Դիզափայտ



քարտեզ 2

43

Քարտեզ 2-ում Կոտայքի սարավանդը ո՞ր տառով է նշված.

- 1) Բ
- 2) Գ
- 3) Դ
- 4) Ա

44

Քարտեզ 2-ում Եղեգնաձոր քաղաքը ո՞ր տառով է նշված.

- 1) Ե
- 2) Զ
- 3) Է
- 4) Ը

45

ՀՀ բնակչության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Թվաքանակով երկրորդ ազգը ասորիներն են:
- 2) Եզդիները հիմնականում բնակվում են Սյունիքի մարզում:
- 3) Ազգային կազմով աշխարհի առավել միատարր պետություններից է:
- 4) Ռուսները հիմնականում բնակվում են Վայոց ձորի մարզում:

46

ՀՀ-ում ուրբանիզացվածության ամենաբարձր մակարդակ ունեցող մարզն է.

- 1) Սյունիքը
- 2) Արարատը
- 3) Արմավիրը
- 4) Շիրակը

47

ՀՀ արդյունաբերության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Մեքենաշինության զարգացումը պայմանավորված է սև մետաղների առկայությամբ:
- 2) Մետաղաձուլության մասնագիտացված ուղղություններից է մոլիբդենի արտադրությունը:
- 3) Քիմիական արդյունաբերության խոշոր կենտրոններ են Հրազդան և Գյումրի քաղաքները:
- 4) Ալյումինի արտադրությունը բացառապես օգտագործում է տեղական հումք՝ Թեժ լեռան և Շվանիձորի (Մեղրու լեռնաշղթա):

48

Ո՞ր մարզում չկա երկաթուղային կայարան.

- 1) Գեղարքունիք
- 2) Վայոց ձոր
- 3) Շիրակ
- 4) Լոռի

49

Արագածոտնի մարզի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Ընդերքը հարուստ է հրաբխային ապարատեսակներով:
- 2) Տարածքի բարձրաչափական նիշերի մեծ տարբերության պատճառով կլիման բազմազան է:
- 3) Հիմնական ջրային զարկերակը Քասաղ գետն է՝ Գեղարտո և Ամբերդ գլխավոր վտակներով:
- 4) Հողային ծածկույթում գերակշռում են կիսաանապատային հողերը:

50

Կոտայքի մարզում բուսաբուծության ո՞ր ենթաճյուղը զարգացած չէ.

- 1) ծխախոտի մշակությունը
- 2) հացահատիկի մշակությունը
- 3) պտղաբուծությունը
- 4) բանջարեղենի մշակությունը

51

Բուսական ռեսուրսների պահպանմանն ու վերականգնմանն ուղղված միջոցառում չէ:

- 1) գենոֆոնդի պահպանումը
- 2) անտառների ստեղծումը
- 3) աղակալված հողերի լվացումը
- 4) արգելոցների ստեղծումը

52

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Համաշխարհային օվկիանոսի աղտոտիչների մեջ գլխավորը նավթը և նավթամթերքն են:
- 2) Համաշխարհային օվկիանոսի հիմնախնդիրն ունի զուտ տնտեսական բնույթ:
- 3) Առավել աղտոտված են Համաշխարհային օվկիանոսի ներքին ծովերը:
- 4) Ցամաքի և օվկիանոսի շփման գոտում ձևավորվել է համաշխարհային օվկիանոսային տնտեսությունը:

53

Ո՞ր տարածաշրջանն է աշխարհում առաջինը աղքատության մակարդակով:

- 1) Հյուսիսային Ամերիկան
- 2) Կենտրոնական Ասիան
- 3) Արևմտյան Եվրոպան
- 4) Կենտրոնական Աֆրիկան

54

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Տեղային էկոլոգիական աղետները շրջակա միջավայրի համամոլորակային փոփոխությունների պատճառ դառնալ չեն կարող:
- 2) Էկոլոգիական աղետալի շրջաններն աշխարհում աստիճանաբար ավելանում են:
- 3) Աշխարհի խոշոր արդյունաբերական շրջաններին բնորոշ են սմոգը, թթվային անձրևները և աղմկային աղտոտումը:
- 4) Էկոլոգիական լարվածությունը պատճառ է դառնում էկոլոգիական ագրեսիայի, որն արտահայտվում է թունավոր տեխնոլոգիաներն ու թափոններն այլ երկրներ տեղափոխելով:

55

ՀՀ արդյունաբերության տրված ճյուղերից օդային ավազանն առավելապես աղտոտում է.

- 1) ջերմաէներգետիկան
- 2) թեթև արդյունաբերությունը
- 3) մեքենաշինությունը
- 4) սննդի արդյունաբերությունը

56

Գրել ճապոնական կղզեխմբին պատկանող կղզիների համարները.

- | | |
|--------------------|-------------|
| 1) Նյու Ֆաունդլենդ | 5) Սումատրա |
| 2) Հոկայդո | 6) Հոնսյու |
| 3) Կրետե | 7) Կյուսյու |
| 4) Ճամայկա | 8) Սիկոկու |

57

Գրել այն երկրների համարները, որոնք առաջատար են ոչխարաբուծությամբ.

- | | |
|-----------------|--------------|
| 1) Գերմանիա | 5) Ուկրաինա |
| 2) Կանադա | 6) Ճապոնիա |
| 3) Նոր Զելանդիա | 7) Լեհաստան |
| 4) Իրան | 8) Արգենտինա |

58

Գրել այն մայրաքաղաքների համարները, որոնք իրենց երկրի ամենախոշոր քաղաքը չեն.

- | | |
|-----------|------------|
| 1) Մինսկ | 5) Բոգոտա |
| 2) Թեհրան | 6) Կահիրե |
| 3) Կիև | 7) Բեյրութ |
| 4) Բեյջին | 8) Անկարա |

59

Գրել այն երկրների համարները, որոնք դաշնային պետություններ են.

- | | |
|-------------|-------------|
| 1) Իտալիա | 5) Թուրքիա |
| 2) Գերմանիա | 6) Բրազիլիա |
| 3) Ուկրաինա | 7) Լեհաստան |
| 4) Ֆրանսիա | 8) Եգիպտոս |

60

Գրել այն երկրների համարները, որոնց բնակչության տարիքային կառուցվածքում համեմատաբար մեծ է ծերերի բաժինը.

- | | |
|---------------|-------------|
| 1) Ուզբեկստան | 5) Իրան |
| 2) Գերմանիա | 6) Պակիստան |
| 3) Աֆղանստան | 7) Եգիպտոս |
| 4) Հնդկաստան | 8) Շվեդիա |

61

Գրել նեֆելինային սիենիտի հանքավայրերի համարները.

- | | |
|--------------|-------------|
| 1) Շվանիձորի | 5) Շամլուղի |
| 2) Թեժ լեռան | 6) Սվարանցի |
| 3) Կապուտանի | 7) Սոթքի |
| 4) Ագարակի | 8) Հրազդանի |

62 ՀՀ տրված գետերի համարները դասավորել դրանց ջրաէներգետիկական հզորության նվազման կարգով.

- 1) Հրազդան 2) Արփա 3) Որոտան

63 Տրված պետությունները դասավորել բնակչության թվաքանակի նվազման կարգով.

- 1) Ռուսաստան
2) Ինդոնեզիա
3) Ճապոնիա
4) ԱՄՆ

(64-65). Գետի ջրի արագությունը 0,4 մ/վ է, իսկ կենդանի կտրվածքի մակերեսը՝ 5 մ²:

64 Որոշել գետի ծախսը:

65 Որոշել գետի հոսքը 5 ժամում:

66

Հայկական հրաբխային բարձրավանդակի մակերեսը կազմում է 100 000 կմ²:
Որքա՞ն մակերես կզբաղեցնի այն 1 : 2 000 000 քարտեզում:

67

Երկրի բնակչության թիվը 90 000 է, բնական աճի գործակիցը՝ 15‰: Տարվա ընթացքում ներգաղթել են 1800 մարդ, իսկ արտագաղթել՝ 700 մարդ: Որոշել երկրի բնակչության թիվը 1 տարի հետո:

68

Վայրի աշխարհագրական կոորդինատներն են՝ հս.լ. 35°30' և արմ. ե. 80°:
Որոշել Արեգակի ճառագայթների անկման անկյունը դեկտեմբերի 22-ի կեսօրին:

69

Գերմանիայի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Արդյունաբերության առաջատար ճյուղերից են մեքենաշինությունն ու քիմիական արդյունաբերությունը:
- 2) Գյուղատնտեսությունն աչքի է ընկնում մեքենայացման ու քիմիացման բարձր մակարդակով:
- 3) Գյուղատնտեսության առաջատար ճյուղը բուսաբուծությունն է:
- 4) Արտահանման մեջ գերակշռում են բնական գազն ու նավթամթերքները:
- 5) Տնտեսությունը գտնվում է զարգացման հետինդուստրիալ փուլում:
- 6) ՀՆԱ-ի կառուցվածքում ամենափոքր բաժինը զբաղեցնում է սպասարկման ոլորտը:

70

ՀՀ Գեղարքունիքի մարզի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Տնտեսության առաջատար ճյուղը գյուղատնտեսությունն է:
- 2) Հողածածկույթում գերակշռում են լեռնաանտառային գորշ հողերը:
- 3) Անասնապահության առաջատար ճյուղն է խոզաբուծությունը:
- 4) Մարզի գյուղերում է ապրում բնակչության մեկ երրորդը:
- 5) Առկա են քրոմիտի և ոսկու պաշարներ:
- 6) Կլիման բարեխառն լեռնային է: